կայ գրութեանց և գործունէութեանց մասին մանրամասն տեղեկութիւնք հաղորդել խմբագրութեանս ի հրատարակութիւն։

Ս. Վ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Ազգիս Վեհ. Հայրապետը ի տօնի .Ս Զատկի ըստ վաղեմի սովորութեան ընդունեց իւր ներկայութեան Մայր Աթոռոյս Միաբանութիւնը և նորան Հայրապետական օրհնութեամբ օրհնեց. որից յետոյ ներկայացան Գ. Ճեմարանի, Ժառանգաւորաց ուսումնարանի և Վաղարշապատու երկսեռ դպրոցաց աշակերտներն ու նոցա ուսուցիչները. Նորին Սրբութիւնը բարեհաճեց լսել նոցա ճառերը և խրախուսել նորանց ուսման մէջ։ Ապա ընդունեց Իւր ներկայութեան Սինոդի և տեղական Կառավարութեան գործավարներին և պաշտօնեաներին և Վաղարշապատու հասարակութեան ներկայացուցիչներին։

***

Նորին Սրբութիւն Ազգիս Վեհ. Հայրապետը բարեհաճեց Տպարանական ժողովոյ անդամ Բարեշն. Ղևոնդ վարդապետին և Շնորհունակ Եփրեմ սարկաւագին վերահաստատել իւրեանց նախկին պաշտօնի մէջ և ներկայ 1882 թուականին, ի նկատի առնելով նոցա ջերմեռանդն և արդիւնաւոր գործունէութիւնը։

***

Խմբագրութիւնս ստացաւ Տփխիսու Հայոց Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրանոցի Մեծ. Հոգաբարձութիւնից նոյն Դպրանոցի 1881 թուականի մտից և ծախուց համառօտ հաշուեցուցակը, որը ամենայն ուրախութեամբ կտպենք յառաջակայ Մայիսի ամսատետրի մէջ՝ ներկայ ամսատետրում պարապ տեղի չունենալոյ պատճառաւ։

***

Ար-ր-ի ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրելով սորա ներկայ ամսատետրի մէջ տպուած՝ Ց. Վ. Մ. ստորագրութեամբ Ալէքսանդրապոլու յաջորդութեան վիճակագրական տեղեկութեանց վերայ, խնդրումենք ձեռնհաս անձինքներից բարեհաճել և իւրեանց վիճակաց և յաջորդութեանց նոյնօրինակ վիճակագրական տեղեկութիւնները առանձին հասուցանել խմբագրութեանս՝ Արարատի էջերում հրատարակելու համար ի տեղեկութիւն Ազգայնոցս։